Հավելված N 1
ՀՀ կառավարության 2010 թվականի
մարտի 4 -ի N 215 - Ա որոշման

«ՄԵԿ ԱԶԳ, ՄԵԿ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԾՐԱԳԻՐԸ

I. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական մշակութային փառատոն-ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) նպատակը և խնդիրներն են՝

ա) սփյուռքում հայ մշակույթի և մշակութային ինքնության պահպանմանն ու զարգացմանը նպաստելը,

բ) Հայաստան-Արցախ-սփյուռք մշակութային կապերի ամրապնդմանն ու զարգացմանը, համագործակցության նոր ձևաչափերի ձևավորմանն աջակցելը,

գ) Հայաստանի և սփյուռքի երիտասարդ ստեղծագործողների միջև մշակութային կապերի խորացմանը, համատեղ ծրագրերի մշակմանը և իրականացմանը սատարելը,

դ) ժամանակակից հայ արվեստի զարգացմանը և գովազդմանն օժանդակելը,

ե) մշակույթի ոլորտում համահայկական մասնագիտական ներուժի հայտնաբերմանն ու համախմբմանը նպաստելը, համահայկական մասնագիտական ընկերակցություններ ստեղծելը,

զ) սփյուռքի ուծացման և լեզվամշակութային ինքնության կորստի դեմ պայքարելը,

է) ազգային մշակույթի պահպանության գործին սփյուռքի ստեղծագործող երիտասարդությանը ներգրավելը,

ը) համահայկական մշակութային ծրագրերի համատեղ մշակման և իրականացման մեխանիզմներ ստեղծելը,

թ) սփյուռքի ստեղծագործական խմբերի և մշակութային կազմակերպությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվական տվյալների շտեմարան ստեղծելը՝ նպաստելով նրանց գործունեության վերաբերյալ Հայաստանում տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը:

II. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ծրագրի մշակման և իրականացման համար հիմք են հանդիսացել՝

ա) «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը,

բ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 380-Ա որոշումը,

գ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի օգոստոսի 20-ի N 34 արձանագրային որոշման 29-րդ կետով հավանության արժանացած՝ Հայաստան-սփյուռք գործակցության հայեցակարգը,

դ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 1523-Ն որոշումը:

III. ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՁԵՎԱՉԱՓԸ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Ծրագիրն անցկացվելու է ամբողջ տարվա ընթացքում՝ հետևյալ հիմնական բաղադրիչներով՝

ա) ծրագրի նախապատրաստական աշխատանքներ՝ գովազդային նյութերի նախագծում և պատրաստում, իրազեկում, Հայաստան-սփյուռք գործակցության և «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնի օրհներգերի մրցույթի անցկացում,

բ) հայ կատարողական արվեստի օրեր՝ համերգային միջոցառումներ, կատարողական արվեստի գործիչների համահայկական համաժողով, վարպետության դասընթացներ (հուլիս-օգոստոս)։

Հիմնական ժանրային ուղղությունները՝

երաժշտարվեստ

պարարվեստ

թատերարվեստ

գրականություն

կերպարվեստ

կիրառական արվեստ

այլ ժանրեր՝ ելնելով մասնակիցների կողմից ստացված հայտերից։

Փառատոնի անցկացման վայրը՝

Հայաստանի և ԼՂՀ-ի քաղաքների համերգային սրահներ, մարզամշակութային դահլիճներ, այլ մշակութային օջախներ, բեմահարթակներ և բաց հրապարակներ,

գ) հայ արվեստի տարբեր ոլորտների հիմնախնդիրների մասնագիտական քննարկումներ, համաժողովներ, «կլոր սեղաններ», ոլորտային այլ նախագծեր և միջոցառումներ (տարվա ընթացքում՝ համաձայն N 2 հավելվածի)։

Մասնակիցներն են՝ ստեղծագործական խմբեր և անհատ կատարողներ Հայաստանից, Արցախից և սփյուռքից, մշակութային միությունների ներկայացուցիչներ, լրագրողներ, գրողներ, գրահրատարակիչներ, թատերական գործիչներ, պարուսույցներ, նկարիչներ, քանդակագործներ, արվեստագետներ, երիտասարդներ, կանայք և այլ մասնակիցներ՝ ըստ հայտերի։

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ծրագրի հաջող իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ է՝

1) ծրագրի կազմակերպման և անցկացման վերաբերյալ հանրային իրազեկման և գովազդի կազմակերպում՝ զանգվածային լրատվության միջոցներով, հոլովակների, գովազդային պաստառների և վահանակների պատրաստում և ներկայացում.

2) փառատոնի անցկացման վերաբերյալ հայտարարության տեքստի և մասնակցության պայմանների մշակում, հրապարակում և տարածում սփյուռքի համայնքներում՝ արտերկրում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, եկեղեցական, համահայկական և համայնքային կառույցների միջոցով.

3) մասնակցիների հայտերի ընդունում, ամփոփում և վերջնական ցանկի կազմում՝ Հայաստանի ստեղծագործական միությունների հետ համատեղ.

4) հայտերի հիման վրա առավել շահավետ պայմաններով կեցության ապահովման աջակցություն։ Կատարողական արվեստի օրերի շրջանակում անցկացվող մշակութային միջոցառումներին՝ Վրաստանի հայաշատ տարածաշրջանների և ԼՂՀ-ի պատվիրակությունների մասնակիցների կեցության ապահովում և սննդի կազմակերպում՝ ըստ անհրաժեշտության.

5) ծրագրի մասնակիցներին պարզեցված ընթացակարգով և անվճար Հայաստան մուտքի արտոնագրերի սահմանված կարգով տրամադրում՝ բնակության երկրներում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, և Հայաստանի Հանրապետության սահմանակետերում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից.

6) մասնակիցների դիմավորում, տեղավորում համապատասխան կեցության վայրերում, ծրագրի շրջանակներում իրականացվող մշակութային, ճանաչողական, ժամանցային և այլ միջոցառումների կազմակերպում, տրանսպորտով և սննդով ապահովում, ընթացիկ վերահսկո-

ղություն և ճանապարհում՝ Հայաստանի ստեղծագործական միությունների հետ համագործակցությամբ.

7) փառատոնի տարբերանշանով հուշափաթեթների պատրաստում՝ ներառյալ շապիկներ, գլխարկներ, կրծքանշաններ, անվանակներ, այլ անհրաժեշտ պարագաներ և հուշանվերներ.

8) ծրագրի շրջանակներում անցկացվող մշակութային միջոցառումների և համաժողովների անցկացման համար դահլիճների, բեմահարթակների և այլ անհրաժեշտ տարածքների ապահովում՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության, Երևանի քաղաքապետարանի (համաձայնությամբ), Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, Հայաստանի ստեղծագործական միությունների (համաձայնությամբ), Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի նախարարության (համաձայնությամբ) աջակցությամբ.

9) նախատեսվող հանդիսավոր արարողություններին Հայաստանի պետական համույթների, մարզային ստեղծագործարական խմբերի և անհատ կատարողների մասնակցության ապահովում՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության, Երևանի քաղաքապետարանի (համաձայնությամբ), Հայաստանի Հանրապետության մարզպետարանների աջակցությամբ.

10) փառատոնի անցկացման ամբողջ ընթացքում մասնակիցների առաջին և անհետաձգելի բժշկական օգնության և սպասարկման կազմակերպում՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման իրականացման ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից։

V. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԾՐԱԳԻՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ

Ծրագրի արդյունավետ իրականացման նպատակով անհրաժեշտ է ապահովել համապատասխան պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի, Սփյուռքի ավանդական կառույցների, Հայաստանի և արտերկրում գործող համայնքային հասարակական և այլ կազմակերպությունների սերտ համագործակցությունը: Այդ նպատակով ստեղծել կազմկոմիտե՝ շահագրգիռ գերատեսչությունների մասնակցությամբ:

VI. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի ակնկալվող արդյունքներն են՝

1) Հայաստան-սփյուռք-Արցախ մշակութային գործակցության խթանումը և զարգացումը.

2) ազգային ինքնության պահպանմանը նպաստելը.

3) զբոսաշրջության խթանումը.

4) Հայաստանի վերաբերյալ սփյուռքահայերի իրական կարծիքի ձևավորմանն աջակցելը.

5) Հայաստան-սփյուռք, սփյուռք-սփյուռք մշակութային կապերի և համագործակցության հնարավորությունների ընդլայնմանը նպաստելը.

6) Հայաստան-սփյուռք գործակցության կառուցակարգերի ստեղծումը՝ համահայկական մասնագիտական ընկերակցությունների միջոցով.

7) ինքնագործ խմբերի կատարողական մակարդակի բարձրացմանն օժանդակելը:

VI. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Ծրագիրը կֆինանսավորվի Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
մարտի 4-ի N 215 - Ա որոշման

Ց Ա Ն Կ

«ՄԵԿ ԱԶԳ, ՄԵԿ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Ժամկետը	Պատասխանատու կառույցը	Ֆինանսավորման աղբյուրը	Ակնկալվող արդյունքը
1	2	3	4	5	6
1.	«Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնի և Հայաստան-սփյուռք գործակցության օրհներգերի մրցույթ	2010 թ. մարտի 1-ից մինչև մայիսի 20-ը	ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն Հայաստանի ստեղծագործական միություններ (համաձայնությամբ) «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ	2 օրհներգ
2.	**Կերպարվեստի օրեր**				
2.1.	Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին նվիրված կերպարվեստի համահայկական ցուցահանդես և	2010թ. ապրիլի 20-30-ը	ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն «Հայաստանի նկարիչների	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ	1 ցուցահանդես՝ 10 օր տևողությամբ

10_0215

1	2	3	4	5	6
	Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշակոթողների պատկերազրքի տպագրում		միություն» ՀԿ (համաձայնությամբ) Երևանի գեղարվեստի ակադեմիա (համաձայնությամբ) «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)	աղբյուրներ	1 պատկերազիրք՝ 500 տպաքանակով
2.2.	Հայ նկարիչների և քանդակագործների համահայկական համաժողով և հայ նկարիչների և քանդակագործների համահայկական ընկերակցության ստեղծում	2010թ. հունիսի 25-27-ը	ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն «Հայաստանի նկարիչների միություն» ՀԿ (համաձայնությամբ) Երևանի գեղարվեստի ակադեմիա «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1 համաժողով՝ մինչև 100 մասնակից 1 մասնագիտական ընկերակցության հիմնում
2.3.	Շրջայցեր Հայաստանի պատմամշակութային վայրեր, մշակույթի օջախներ, հանդիպումներ Հայաստանի պետական պաշտոնյաների, հոգևոր առաջնորդների և այլ անվանի մարդկանց հետ,այցեր ժամանակակից հայ նկարիչների և քանդակագործների արվեստանոցներ	2010թ. հունիսի 25-27-ը	ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն Հայաստանյայց առաքելական եկեղեցի (համաձայնությամբ) «Հայաստանի նկարիչների միություն» ՀԿ (համաձայնությամբ) «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ	այցելություն 2 պատմամշակութային վայր առնվազն 3 հանդիպում պետական այրերի և հոգևոր առաջնորդների հետ այցելություն 2 արվեստանոց
2.4.	Վարպետության դասընթացներ՝	2010 թ.	«Հայաստանի նկարիչների	ՀՀ պետական բյուջե	վարպետության

1	2	3	4	5	6
	Հայաստանի երիտասարդ նկարիչ-ների համար	հունիսի 25-27-ը	միություն» ՀԿ (համաձայնությամբ) Երևանի գեղարվեստի ակադեմիա «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)	օրենքով չարգելված այլ աղբյուրներ	դասընթացներ մինչև 50 երիտասարդ նկարիչների համար
3.	**Հայ գրականության օրեր**				
3.1.	Գրողների՝ «Հայ գրականությունը՝ հայոց միջնաբերդ» խորագրով հա-մահայկական V համաժողով	2010 թ. հունիսի 28-29-ը	ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն «Հայաստանի գրողների միություն» ՀԿ (համաձայնությամբ) ՀՀ ԳԱԱ-ի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1 մասնագիտական համաժողով՝ շուրջ 100 մասնակից
3.2.	Այցելություն Գյումրի, Հ. Շիրազի 95-ամյակին նվիրված հանդիսու-թյուն Գյումրիում	2010 թ. հուլիսի 1	ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ Շիրակի մարզպետարան «Հայաստանի գրողների միություն» ՀԿ (համաձայնությամբ) «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1 հանդիսություն՝ մինչև 50 հրավիրյալ սփյուռքից
3.3.	«Արևմտահայերեն միասնական դա-սագրքերի ստեղծման սկզբունք-ները» թեմայով գիտաժողով	2010 թ. հուլիսի 2	ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն «Հայաստանի գրողների	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1 գիտաժողով՝ շուրջ 30 մասնակից, որից՝ 10-ը սփյուռքից

1	2	3	4	5	6
			միություն» ՀԿ (համաձայնությամբ) ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)		
3.4.	Շրջայցեր Հայաստանի պատմա-մշակութային վայրեր, մշակույթի օջախներ, հանդիպում-զրույցներ Երևանի և ՀՀ մարզերի ուսումնա-կան հաստատություններում	2010 թ. հունիսի 30	ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ մարզպետարաններ Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) «Հայաստանի գրողների միություն» ՀԿ (համաձայնությամբ) «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ	այցելություն 6 պատմամշակութային հուշարձան 5 հանդիպում ՀՀ ուսումնական հաստատություններում
3.5.	**Ռուբեն Սևակի 125-ամյակին նվիրված միջոցառումներ՝** -Ռ.Սևակի ստեղծագործությանը նվիրված գիտական նստաշրջան -Ռ. Սևակի պոեզիային նվիրված խտասալիկի թողարկում՝ հայ ասմունքի վարպետների կատարմամբ -«Ռ.Սևակը և նրա ժամանակը»	2010 թ. ընթացքում	ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն «Հայաստանի գրողների միություն» ՀԿ (համաձայնությամբ) ՀՀ ԳԱԱ-ի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1 գիտական նստաշրջան՝ 1 օր շուրջ 30 մասնակից 1 խտասալիկ՝ 500 օրինակ 1 ցուցահանդես՝ 2 օր

1	2	3	4	5	6
	խորագրով ցուցահանդես - Ռուբեն Սևակի 125-ամյակին նվիրված հանդիսավոր երեկո				1 հանդիսավոր երեկո
4.	**«Հայ կատարողական արվեստի օրեր»**				
4.1	Հանդիսավոր արարողություն Երևանի Հանրապետության հրապարակում՝ «Ողջունում է Երևանը» կարգախոսով	2010 թ. հուլիսի 22	ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մարզպետարաններ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն Հայաստանի ստեղծագործական միություններ (համաձայնությամբ) «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1 հանդիսավոր արարողություն՝ շուրջ 1000 մասնակից սփյուռքից
4.2.	Պարային համույթների, թատերախմբերի, երգչախմբերի, անհատ կատարողների ելույթներ Հայաստանի և Արցախի համերգային սրահներում, մարզամշակութային դահլիճներում, այլ մշակութային	2010 թ. հուլիսի 23-28-ը	ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ԼՂՀ-ի մշակույթի նախարարություն (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ	8 համերգային ծրագիր՝ շուրջ 500 մասնակից

1	2	3	4	5	6
	օջախներում, բեմահարթակնե-րում և բաց հրապարակներում, հոգևոր երաժշտության օր Էջմիածնում,ազգային տոնական ծիսակատարություններ ՀՀ մարզերում		Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մարզպետարաններ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն Հայաստանի ստեղծագործական միություններ (համաձայնությամ) «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)		
4.3.	Շրջայցեր Հայաստանի և Արցախի պատմամշակութային վայրեր, մշակութային օջախներ, հանդի-պումներ ՀՀ-ի և ԼՂՀ-ի պետական պաշտոնյաների և հոգևոր առաջ-նորդների հետ	2010 թ. հուլիսի 23-28-ը	ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն ԼՂՀ-ի մշակույթի նախարարություն (համաձայնությամբ) Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մարզպետարաններ «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ	այցելություն մինչև 10 պատմամշակութային վայր, մինչև 5 հանդիպում
4.4.	Հրաժեշտի հանդիսավոր արարո-ղություն-համերգային ծրագիր Կ.Դեմիրճյանի անվ. մարզա-համերգային համալիրում	2010 թ. հուլիսի 29	ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մարզպետարաններ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն Հայաստանի ստեղծագործական միություններ (համաձայնությամբ) «Մեկ ազգ, մեկ մշակույթ»	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1 հանդիսավոր արարողություն՝ 300 մասնակից

1	2	3	4	5	6
			հիմնադրամ (համաձայնությամբ)		
4.5.	Հայ կատարողական արվեստի գործիչների համահայկական համաժողով և հայ կատարողա-կան արվեստի գործիչների համահայկական ընկերակցու-թյան ստեղծում	2010 թ. հուլիսի 30	ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Հայաստանի ստեղծագործական միություններ (համաձայնությամբ) «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1 համաժողով՝ շուրջ 100 մասնակից և 1 մասնագիտական ընկերակցության հիմնում
4.6.	Վարպետության դասընթացներ պարուսույցների և երգչախմբերի խմբավարների համար Երևանում	2010 թ. օգոստոսի 2-8-ը	Հայաստանի ստեղծագործական միություններ (համաձայնությամբ) Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան Երևանի պարարվեստի ուսումնարան «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ	մինչև 50 անձի վարպետության դասընթացներ (ըստ հայտերի)
4.7.	Շախմատի համահայկական երի-տասարդական օլիմպիադայի եզրափակիչ փուլի անցկացում Հայաստանում	2010 թ. օգոստոսի 15-23-ը	ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ԼՂՀ-ի կառավարության սպորտի կոմիտե (համաձայնությամբ) Երևանի քաղաքապետարան	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1 համահայկական օլիմպիադա՝ շուրջ 100 մասնակից

1	2	3	4	5	6
			(համաձայնությամբ) ՀՀ մարզպետարաններ Հայաստանի շախմատի ակադեմիա (համաձայնությամբ) «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)		
5.	**Թատերական հյուրախաղեր**				
5.1.	Բեյրութի ՀԲԸՄ Հայ երիտասարդական ընկերակցության Վահրամ Փափազյանի անվան թատրոնի, Մոսկվայի Հայկական թատրոնի և «Համազգային» հայ կրթական և մշակութային միության Նյու Ջերսիի թատերախմբի հյուրախաղեր Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում	2010թ. հուլիս - սեպտեմբեր	ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն ԼՂՀ-ի մշակույթի նախարարություն ՀՀ մարզպետարաններ Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Հայ բարեգործական ընդհանուր միության հայաստանյան ներկայացուցչություն (համաձայնությամբ) «Համազգային» հայ կրթական և մշակութային հիմնադրամ (համաձայնությամբ) «Հայաստանի թատերական գործիչների միավորում» ՀԿ (համաձայնությամբ) «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ	3 թատերական խմբի հյուրախաղեր՝ 7-8 ներկայացում

1	2	3	4	5	6
6.	**Զանգվածային լրատվամիջոցների շաբաթ**				
6.1.	Լրատվամիջոցների և լրագրողների համահայկականV համաժողով՝ «Հայկական ԶԼՄ-ները Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման մասին» թեմայով,Լրատվամիջոցների համահայկական ընկերակցության համալրում և առաջիկա ծրագրերի մշակում	2010թ. հոկտեմբերի 12-13-ը	ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) «Հայաստանի ժուռնալիստների միություն» ՀԿ (համաձայնությամբ) «Լրատվամիջոցների համահայկական ընկերակցություն» իրավաբանական անձանց միություն» ՀԿ (համաձայնությամբ) «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1 մասնագիտական համաժողով՝ 100 մասնակից մասնագիտական ընկերակցության համալրում և գործունեության խթանում
6.2.	Հայաստանի և սփյուռքի ԶԼՄ-ների լուսանկարչական ցուցահանդես	2010թ. հոկտեմբերի 12-13-ը	ՀՀ սփյուռքի նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամ) «Հայաստանի ժուռնալիստների միություն» ՀԿ (համաձայնությամբ) «Լրատվամիջոցների համահայկական ընկերակցություն» իրավաբանական անձանց միություն» ՀԿ (համաձայնությամբ) «Մեկ ազգ, մեկ մշակույթ»	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1 ցուցահանդես՝ շուրջ 250 այցելու

1	2	3	4	5	6
			հիմնադրամ (համաձայնությամբ)		
6.3.	ՀՀ սփյուռքի նախարարության և Համաշխարհային հայկական կոնգ-րեսի կողմից համատեղ կազմա-կերպվող «Հայապահպանության գործում ունեցած նշանակալից ավանդի համար» սփյուռքի լրատ-վամիջոցների մրցանակաբաշխու-թյան ամփոփում	2010թ. հոկտեմբերի 13	ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն «Հայաստանի ժուռնալիստների միություն» ՀԿ (համաձայնությամբ) Համաշխարհային հայկական կոնգրես (համաձայնությամբ) «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1 մրցանակաբաշխություն՝ ըստ անվանակարգերի, մինչև 30 լրատվամիջոցի մասնակցությամբ
6.4.	Հանդիպումներ Հայաստանի և Արցախի պետական պաշտոնյա-ների, հոգևոր առաջնորդների, այլ անվանի մարդկանցև հանրու-թյան ներկայացուցիչների հետ, շրջայցեր Հայաստանի և Արցախի պատմամշակութային վայրեր, մշակույթի օջախներ	2010թ. հոկտեմբերի 12-16-ը	ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն ԼՂՀ-ի մշակույթի նախարարություն (համաձայնությամբ) Հայաստանյայց առաքելական եկեղեցի (համաձայնությամբ) ՀՀ մարզպետարաններ Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) «Հայաստանի ժուռնալիստների միություն» ՀԿ (համաձայնությամբ) «Լրատվամիջոցների համահայկական ընկերակցություն»	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ	այցելություն մինչև 5 պատմամշակութային վայր, 3-5 հանդիպում

1	2	3	4	5	6
			իրավաբանական անձանց միություն» ՀԿ (համաձայնությամբ) «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ